ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/5

ք. Երևան «29» դեկտեմբերի 2017 թ.

Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամը՝ ի դեմս գործադիր տնօրեն Գեղամ Գևորգյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Յ. Խաչատուրյանի, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, հավելվածներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 40 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը սխալտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 40 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին տեղեկացնել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս կատարված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս կատարված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 2637000 (երկու միլիոն վեց հարյուր երեսունյոթ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, կարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը վերացնելու այդ գինը:

3.2 Պայմանագրի գնից՝ մինչև 2637000 (երկու միլիոն վեց հարյուր երեսունյոթ հազար) ՀՀ դրամը, Գնորդը իրականացնում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 29-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), ինչպես էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի խիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն մատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ ուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո սմբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները րիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն սզատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է ույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի ոավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, աղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական ոարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ ակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ ստուգողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի սրհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք հահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման կահանջը:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ	**«Էս Թի Սերվիս» ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական տուն 3	Հասցե՝ ք. Երևան, Բայրոնի 4-4
ՀՎՀՀ՝ 02659417	ՀՎՀՀ՝ 01566381
Բանկ՝ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ	Բանկ՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 22000919025[illegible]000	Հ/Հ՝ 16062002111500
ստորագրություն/ LS	ստորագրություն/ KS

Հավելված N 1
«29» դեկտեմբերի 2017 թ. կնքված
ԳՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/5 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի											
հրա վերով նախա տեսված չափա բաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափ ման միա վորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհան ուր գինը/ՀՀ դրամ	ընդ հա նու ր քա նա կը	մատակարարման		
									հասցեն	ենթակ ա քա նա կը	ժամկետը
1	39113200/3	փոքր բազմոցներ	<<	Բազմոց 220 սմ երկարությամբ և 90 սմ լայնությամբ: Կարկասային հատվածն ամբողջապես կաղնու փայտից է, օգտագործվող պաստառ բարձրորակ՝ նախատեսված հատուկ պաստառապատման համար, նստատեղերի հիմքում օգտագործված է բարձր առաձգականություն և խտություն ունեցող սպունգ և անկախ զսպանակ, վրայի հատվածում արհեստական մանրաթել է օգտագործված, նստատեղերը, հենակները և բարձերն ունեն շղթայի հատվածներ և մինչև պաստառի մեջ անցկացնելը դրվում են հատուկ կտորից պարկերի մեջ: Բազկակալների վրայի հատվածը ծածկված լինի լամինացված մշակված մակերևույթով: Երաշխիքային սպասարկումը 3 տարի:	հատ	224000	224000	1	ք. Երևան, Արոնց 6/1-54	1	10.02.2018
2	39111190/3	բազկաթոռներ	<<	Բազկաթոռ 100 սմ երկարությամբ և 90 սմ լայնությամբ: Կարկասային հատվածն ամբողջապես կաղնու փայտից է, օգտագործվող պաստառ բարձրորակ՝ նախատեսված հատուկ պաստառապատման համար, նստատեղերի հիմքում օգտագործված է բարձր առաձգականություն և խտություն ունեցող սպունգ և անկախ զսպանակ, վրայի հատվածում արհեստական մանրաթել է օգտագործված, նստատեղերը, հենակները և բարձերն ունեն շղթայի հատվածներ և մինչև պաստառի մեջ անցկացնելը դրվում են հատուկ կտորից պարկերի մեջ: Բազկակալների վրայի հատվածը ծածկված լինի լամինացված մշակված մակերևույթով: Երաշխիքային սպասարկումը 3 տարի:	հատ	123000	246000	2		2	10.02.2018
3	39121400/3	լրագրասեղան	<<	Սուրճի սեղան՝ պատրաստված 18մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ-ից (Starwood կամ համարժեք), ներքևի հատվածում ջերմամշակված ապակուց դարակաշար: Կարկասային դետալները ամրացված են հատուկ ամրակներով (фиксатор) որոնցից աջ և ձախ կողմերից 30սմ շեղվածությամբ փայտե շիպեր են դրված: Երաշխիքային սպասարկումը 3 տարի:	հատ	43000	43000	1		1	10.02.2018
4	39121300/4	սեղան, գրասեղան, աշխատանքային, գրասենյակային	<<	Սեղան՝ պատրաստված շպոնապատ մակերեսից, եզրերը հաստեցված 4սմ պրոֆիլով, անկյունները կլորացված, Չափսերն են՝ 360սմx140սմx75սմ, նախատեսված 14 անձի համար: Սեղանի կենտրոնական հատվածում կա էլեկտրականությամբ հագեցած առանձնացված մաս՝ նախատեսված հատուկ սարքավորումներ կիրառելու համար: Ոտքերի հատվածն հաստեցված է և սեղանի երեսին է միանում հատուկ մամլիչներով, որոնցից աջ և ձախ կողմերից 30սմ շեղվածությամբ փայտե շիպեր են դրված: Բոլոր կարկասային դետալները ամրացված են հատուկ ամրակներով, պտուտակները	հատ	402000	402000	1		1	10.02.2018

				ծածկված են ինքնասոսնձվող խցակալներով: Երաշխիքային սպասարկումը 3 տարի:							
5	39121400/3	սեղան՝ ղեկավարի	<<	Գրասենյակային սեղան պատրաստված շպոնապատ ՄԴՖ-ից: Չափսերն են՝ լ. 180սմ, խ. 60սմ, բ. 75սմ, կողային սեղանի չափսերն են՝ լ. 120սմ, խ. 50սմ, բ. 60սմ, դիմադիր սեղանի չափսերն են՝ լ. 130սմ,խ. 50սմ, բ. 70սմ: Գրասեղանը ունի չորս հավասար դարակաշար: Գրասենյակային կահույքի բոլոր կարկասային դետալները ամրացված են հատուկ ամրակներով (фиксатор) որոնցից աջ և ձախ կողմերից 30սմ շեղվածությամբ փայտե շիպեր են դրված: Բոլոր պտուտակները ծածկված են ինքնասոսնձվող խցակալներով, բռնակները և խեցիները (վակումային) բարձրորակ: Երաշխիքային սպասարկումը 3 տարի:	հատ	372000	372000	1		1	10.02.2018
6	39130000/8	գրասենյակային կահույք	<<	Պահարան՝ պատրաստված 18մմ հաստություն ունեցող լամինացված ՓSU-ից: Պահարանի չափսերն են՝ լ. 130սմ, խ. 40սմ, բ. 210սմ: Պահարանը բաժանված է երեք մասի, ձախ հատվածի վերևի մասում ջերմամշակված ապակե դռներ են,որոնք աշխատում են ավստրիական ապրանքանիշի բարձրորակ համակարգերով՝ դուռը բացվում է ձեռքի հպումով և փակվում է նույն կերպ, աջ հատվածում կա կոշիկների համար նախատեսված դարակ: Դռների ներսում հավասարապես բաժանված բաց դարակաշարեր կան, ներքևի հատվածն հավասար բաժանված լամինատե դարակներ են,պահարանի աջ հատվածում ամբողջական լամինատե դուռ է, կողմերը փակցված են PVS-ով, հետևի հատվածում փակված ամբողջական լամինացված ԴՎՊ-ով: Կահույքի բոլոր կարկասային դետալները ամրացված են հատուկ ամրակներով: Բոլոր պտուտակները ծածկված են ինքնասոսնձվող խցակալներով, բռնակները և խեցիները (վակումային) բարձրորակ: Երաշխիքային սպասարկումը 3 տարի:	հատ	132000	264000	2		2	10.02.2018
7	39130000/9	գրասենյակային կահույք	<<	Գրասենյակային կահույք պատրաստված 18մմ հաստություն ունեցող լամինացված ՓSU-ից: Պահարանի չափսերն են՝ լ. 210սմ, խ. 45սմ, բ. 220սմ, բաժանված է հինգ հավասար մասերի, ձախ հատվածում ամբողջապես լամինատե դուռ է, մնացած հատվածում վերևի բաժանումներն արված են ապակե ջերմամշակված դռներով,ներքևի հատվածում հավասարապես բաժանված լամինատե դռներով: Կողմերը փակցված են PVS-ով, հետևի հատվածում փակված ամբողջական լամինացված ԴՎՊ-ով: Գրասենյակային կահույքի բոլոր կարկասային դետալները ամրացված են հատուկ ամրակներով (фиксатор) որոնցից աջ և ձախ կողմերից 30սմ շեղվածությամբ փայտե շիպեր են դրված: Բոլոր պտուտակները ծածկված են ինքնասոսնձվող խցակալներով, բռնակները և խեցիները(վակումային) բարձրորակ: Երաշխիքային սպասարկումը 3 տարի	հատ	228000	228000	1		1	10.02.2018
8	39130000/10	գրասենյակային կահույք	<<	Պահարանը պատրաստված 18մմ հաստություն ունեցող լամինացված ՓSU-ից: Չափսերը՝ լ. 120սմ, խ. 40սմ, բ. 180սմ, ուղղահայաց հավասարապես բաժանված է երեք մասի,հորիզոնական երկու մասի, կողմերը փակցված են PVS-ով, հետևի հատվածում փակված ամբողջական լամինացված ԴՎՊ-ով: Պահարանի բոլոր կարկասային դետալները ամրացված են հատուկ ամրակներով (фиксатор), որոնցից աջ և ձախ կողմերից 30սմ շեղվածությամբ փայտե շիպեր են դրված: Բոլոր պտուտակները ծածկված են ինքնասոսնձվող խցակալներով, բռնակները և խեցիները (վակումային) բարձրորակ: Երաշխիքային սպասարկումը 3 տարի:	հատ	120000	120000	1		1	10.02.2018
9	39131200/5	արխիվի դարակաշարեր	<<	Դարակաշար՝ պատրաստված 6սմ հաստություն ունեցող լամինացված ՓSU-ից: Չափսերը՝ լ. 170սմ, բ.240սմ, խ. 40սմ, հետևի հատվածում փակված ամբողջական լամինացված ԴՎՊ-ով: Այն ունի հորիզոնական 4	հատ	198000	198000	1		1	10.02.2018

				և ուղղահայց 2 բաժանումներ, որոնց միջև հեռավորությունը 40սմ է և որոնց գույնը համապատասխանեցված է պահարանի արտաքին գույնին: Պահարանի բոլոր կարկասային դետալները ամրացված են հատուկ ամրակներով (фиксатор), որոնցից աջ և ձախ կողմերից 30սմ շեղվածությամբ փայտե շիպեր են դրված: Բոլոր պտուտակները ծածկված են ինքնասոսնձվող խցակալներով: Երաշխիքային սպասարկումը 3 տարի:							
10	39131200/6	արխիվի դարակաշարեր		Դարակաշար՝ պատրաստված 4սմ հաստություն ունեցող լամինացված ՓՏՍ-ից: Չափերը՝ է. համապատասխանաբար 186սմ, 299, 5սմ, 89սմ, 424սմ, բ. 280սմ, խ. 40սմ, հետևի հատվածում փակված ամբողջական լամինացված ԴՎՊ-ով: Պահարանը բոլոր հատվածներից հորիզոնական հինգ բաժանումներ ունի, որոնց միջև հեռավորությունը 40սմ է և որոնց գույնը համապատասխանեցված է պահարանի արտաքին գույնին: Պահարանի բոլոր կարկասային դետալները ամրացված են հատուկ ամրակներով (фиксатор). որոնցից աջ և ձախ կողմերից 30սմ շեղվածությամբ փայտե շիպեր են դրված: Բոլոր պտուտակները ծածկված են ինքնասոսնձվող խցակալներով: Երաշխիքային սպասարկումը 3 տարի:	հատ	540000	540000	1		1	10.02.2018

ԳՆՈՐԴ
Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ

Հասցե՝ ք. Երևան, Կառավարական տուն 3
ՀՎՀՀ՝ 02659417
Բանկ՝ «Ակբա-Կредիտ Агрիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 22000019025100[illegible]

ՎԱՃԱՌՈՂ
«Էս Թի Սերվիս» ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Բայրոնի 4-4
ՀՎՀՀ՝ 01566381
Բանկ՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 16062002111500[illegible]

Հավելված N 2
«29» դեկտեմբերի 2017 թ. կնքված
ԳՁՀ-ԳՀԱՊՁԲ-17/5 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	39113200/3	փոքր բազմոցներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	224000	**224000**
2	39111190/3	բազկաթոռներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	246000	**246000**
3	39121400/3	լրագրասեղան	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	43000	**43000**
4	39121300/4	սեղան, գրասեղան, աշխատանքային, գրասենյակային	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	402000	**402000**
5	39121360/3	սեղան՝ ղեկավարի	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	372000	**372000**
6	39130000/8	գրասենյակային կահույք	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	264000	**264000**
7	39130000/9	գրասենյակային կահույք	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	228000	**228000**
8	39130000/10	գրասենյակային կահույք	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	120000	**120000**
9	39131200/5	արխիվի դարակաշարեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	198000	**198000**
10	39131200/6	արխիվի դարակաշարեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	540000	**540000**
ԸՆԴԱՄԵՆԸ														2637000	**2637000**

ԳՆՈՐԴ
Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ

Հասցե՝ ք. Երևան, Կառավարական տուն 3
ՀՎՀՀ՝ 02659417
Բանկ՝ «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 220009090251000

/ստորագրություն/ Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Էս Թի Սերվիս» ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Թումանի 4-4
ՀՎՀՀ՝ 01566381
Բանկ՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 16062002111500

/ստորագրություն/ Կ.Տ.

Հավելված N 3
«29» դեկտեմբերի 2017 թ. կնքված
ԳՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/5 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«29» դեկտեմբերի 2017 թ. կնքված
ԳՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/5 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն